


ՄՐՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Աստուածաշունչը կը խօսի քարեղէն սիրտի մասին (Եզ. 36.26), ինչպէս նաեւ՝ մարմնեղէն սիրտի մասին (Եզ. 36.26: Կր. 3.3): Քարեղէն սիրտը Աստուծոյ շնորհիփն դիմաց փակուած սիրտն է (Հո. 11.7), իսկ մարմնեղէն սիրտը՝ Աստուծոյ փրկարար շնորհիփն դիմաց բացուած սիրտը:

Ի՞նչն է, որ կը փակէ սիրտը Աստուծոյ շնորհիփն դիմաց: Մեղքը: Առաքեալը կը պատուիրէ, որ «ոեւէ մէկը մեղքերէ տարուելով իր սիրտը չփակէ Աստուծոյ դիմաց» (Եբր. 3.13): Մնայուն կերպով մեղք գործող անձին սիրտը ժամանակի ընթացքին կը կարծրանայ եւ անկարող կ'ըլլայ հաւատալու Աստուծոյ, կամ սիրելու զԱստուած եւ մարդիկը: Նման սիրտ մը կարիքը ունի նորոգութեան, որպէսզի դառնայ կակուղ եւ զգայուն Տիրոջ ձայնին. իսկ սիրտ մը կը նորոգուի, երբ Տիրոջ ձեռքին կը յանձնուի ու Տիրոջ ձեռքով կը մաքրուի, եւ անկէ ետք Սուրբ Հոգիին ներգործութեան կը յանձնուի: Նորոգուած սիրտը այն է, որուն մէջ Առաւօտեան Աստղը ծագած է եւ որուն լոյսով կը տեսնէ Աստուծոյ փառքը (Բ. Պտ. 1.19: Բ. Կր. 4.6): Նորոգուած սիրտը իր մէջ Քրիստոսի Հոգին ունեցող սիրտն է (Գղ. 4.6), Տիրոջ համար միշտ երգող ու սաղմոս ըսող սիրտն է (Նփ. 5.19), իր մէջ Քրիստոսի խաղաղութիւնը ունեցող սիրտն է (Կ. 3.15), շնորհակալութեամբ զԱստուած օրհնեբող սիրտն է (Կղ. 3.16), իր մէջ Տիրոջ խօսքերը պահող սիրտն է (Ս. Յե. 2.24): Նորոգուած սիրտը Յիսուսի սիրողը իր թշնամին սիրող սիրտն է, մարդոց փրկութեան համար արցունք թափող սիրտն է, Յիսուսի սէրը երգող սիրտն է:

ՍՐԲԱՆՈՅՍ ՄԻՒՐՆԸ



ԵՐԲ Կ'ՕՐՀՆՈՒԻ ՄԻՒՐՆԸ...

Միւռոնը ի՛նչ է, բայց երբ կ'օրհնուի Ամենասուրբ Երրորդութեան անունով եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի աջով, կը դառնայ բժշկարար ձեռքը Սուրբ Հոգիին, որմէ եթէ բռնենք հաւատքով, հոգեւոր բժշկութիւն ձեռք կը ձգենք: Միւռոնը ծաղիկներու ամբողջութիւնն մըն է, բայց երբ կ'օրհնուի, կը դառնայ ամբողջութիւնը Սուրբ Հոգիին կողմէ պարգեւուած առաքինութիւններու, որ եթէ ընդգրկենք, մեր կեանքը կը գեղեցկանայ առաքինութեանց առիւնտող ծաղիկներով: Միւռոնը համեմտութիւնը հաւաքածո՛յ մըն է, բայց երբ կ'օրհնուի, կը դառնայ համն ու համեմը, եւ բոյրն ու բուրմունքը Սուրբ Հոգիին, որ եթէ ընկալենք աներկբայ հաւատքով, կը դառնայ համը մեղքով անհամացած մեր կեանքին, եւ բոյրն ու բուրմունքը՝ մեղքով զարշահուած մեր կեանքին:



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԶԱՒԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 26 ՅՈՒՆԻՍ 2022 ԹԻՒ 26

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 1.2-15: Հռ. 3. 12-23: Մտ. 12.1-8

ՅԻՍՈՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 12.1-8

Շարք օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր: Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. «Տես, աշակերտներդ ի՛նչ կ'ընեն: Բան մը, որ արգիլուած է Շարք օրով ընել»:

Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած, թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շարք օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Շարքը եւ սակայն անիկա մեղք չի համարուիր իրենց: Ահա կ'ըսեմ ձեզի, որ տաճարէն աւելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնայիք, թէ ի՛նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ», այն աստե՛ն չէիք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շարքին»:

Ի՞նչն է քեզի համար լաւ բանը

Օր մը երկինքով չհետաքրքրուած մարդու մը հարց տուի. «Ի՞նչն է քեզի համար լաւ բանը»: Ան պատասխանեց. «Դիրքն ու դրամը»: Ան ինքզինք խաբած պիտի ըլլար, եթէ տարբեր պատասխան տար: Իսկ դուն, սիրելի ընթերցող, ի՞նչ է քեզի համար կարեւոր բանը. դիրքն ու դրամը, թէ՛ Յիսուսի սէրն ու խաչը: Դիրքն ու դրամը չեն կրնար քեզի խաղաղութիւն տալ եւ հանգիստ շնորհել: Կրնաս մեծ գումարներ ունենալ, բայց նոյնքան ալ մեծ մտահոգութիւններ: Կրնաս բարձր դիրքերու հասնիլ, բայց երբեք ալ հանգիստ չգտնել: Աստուծոյ գաւակներէն շատե՛ր ո՛չ դիրք ունե՛ին եւ ո՛չ ալ դրամ, բայց եւ այնպէս, ունե՛ին ներքին խաղաղութիւն մը, որ գիրենք անյաղապարհի կը դարձնէր:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՀԱՅՈՑ ՄՐՏԻ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Ներսէս Հայրապետ կաթողիկոս ձեռնադրուեցաւ 353 թուականին, Արշակ Բ. թագաւորի օրով: Ան թագաւորին քարտուղարն էր, սակայն Փառէն Աշտիշատեցի կաթողիկոսի մահէն ետք թափուր մնացած հայրապետական աթոռին համար արժանաւոր մէկը պէտք էր ընտրել: Այս արժանաւոր անձը հանդիսացաւ Յուսիկ Հայրապետի թոռը՝ Ներսէս:

Պատմութիւնը Ներսէս Հայրապետին ընծայած է ՄԵԾ Տիտղոսը իր կատարած մեծ գործերուն եւ բարեկարգութիւններուն համար: Հիմնական նպատակն էր հայ ժողովուրդի սրտին մէջ քրիստոնէական ազնիւ գագուսները ներմուծել եւ արմատացնել: Այսպէս օրինակ, կը քաջալերէր իր ժողովուրդը, որ հեթանոսական սովորութեամբ մահուան առջեւ անյոյս չողբան, այլ՝ յարութեան յոյսով երկինքի արքայութեան հաւատան: Անդադար կը քաջալերէր, որ մարդիկ բարեգործութիւն կատարեն եւ օրինակը ինքն իսկ տալով, իր տան մէջ կը հոգար որբերն ու չճաւորները:

Մեծն Ներսէս կաթողիկոս իր պաշտօնին գլխուն անցնելով մեծ բարեկարգութիւններու ձեռնարկեց:

Անհամար վանքերու, դպրոցներու, որբանոցներու հիմնադրութիւնը իր աշխատանքին մէկ բաժինն էր: Ան կազմակերպեց հայ եկեղեցական դասը, փահաններ, եպիսկոպոսներ եւ քարոզիչներ ամէն կողմ դրկելով: Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ որոշ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործադրութեան համար:

Ահա իր այս բարեսիրական գործերուն շնորհիւ է, որ ան դարձաւ Հայոց սրտի յուսաւորիչ:

# ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

## ՄԱՐԴ ԱՐԱՐԱԾԸ ԿՐՅԱՒ ԻՐ ԿՈՉՈՒՄԻՆ ՏԵՐԸ ԸԼԼԱԼ ԵՒ ԿԱՏԱՐԵԼ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

Ո՛չ: Ադամ Աստուծոյ բոլոր բարիքները վայելելով հանդերձ՝ անհնազանդ գտնուեցաւ Աստուծոյ ու չկրցաւ տերը ըլլալ իր կոչումին եւ կատարել իր պարտականութիւնը:

Ադամ եւ Եւա իրենց գործած յանցանքին պատճառով կորսնցուցին իրենց փառքն ու սրբութեան քողը: Մեղքը ապականեց գիրենք ու մերկացուց սրբութենէն, որովհետեւ չկրցան Աստուծոյ սրբութեան առջեւ կայնիլ ու ջանացին ծածկուիլ թզենիի տերեւներով:

Անհնազանդութեան մեղքին պատճառով անարժան դարձան դրախտին վայելչութեան ու զրկուեցան անկէ:

## Ո՛Վ ՄՐԵՑ ՄԱՐԴԸ ԱՆՅՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ:

Մարդուն նախանձորդ թշնամին՝ չար սատանան, որ բանսարկու է եւ ստախօս (Յովհ. 8.44: Ա. Պետ. 5.8):

## Ո՛Վ Է ՍԱՏԱՆԱՆ ԵՒ ԻՆՉՈՒՄ ԶԱՄԱՐ ԱՅԴ ԲԱՆՍԱՐԿՈՒ ՕՁԸ ԱՆՅՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՄՐԵՑ ՄԱՐԴԸ:

Սատանան նախապէս կը կոչուէր Արուսեակ եւ երկինքի հրեշտակներուն մէջ բարձր դիրք եւ պատիւ ունէր: Ան ապստամբեցաւ իր Արարիչին դէմ ուզեց տեղը առնել, այդ պատճառով Աստուած զինք վար ձգեց իր բարձրութենէն: Պատժեց նաեւ անոր հետ չար հրեշտակները (Եսայի 14.12-15: Մտթ. 25. 41: Բ. Պետրոս 2.4: Յուռ. 1.5):

# Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

## ՆԵՐՈՒՄԸ՝ ՆԵՐՈՒՄ ՊԷՏՔ Է ՃԱՌՎՈՒԹԵԱՆ

Սուրբ Յովհան Ոսկեբերան կ'ըսէ. «Յիսուս բոլորին մեղքերը չգրեց հողին վրայ, այլ՝ միայն մեղքերը անոնց, որոնք եկած էին դատապարտելու մեղաւոր կինը, որովհետեւ ով որ կը դատէ իր եղբայրը՝ պիտի դատուի, եւ ինչ սկզբունքով, որ դատէ ուրիշը՝ նոյն սկզբունքով Աստուած զինք պիտի դատէ: Մեղքէ յաղթածները ընդհանրապէս իրենք է, որ լեցուն կ'ըլլան բռնութեամբ եւ աններողամտութեամբ մեղաւորներուն հանդէպ, իսկ արդարները, ընդհակառակը, քաղցրութեամբ եւ գթութեամբ լեցուն կ'ըլլան մեղաւորներուն հանդէպ, եւ այդպիսիները իրենք զիրենք է, որ կը դատեն եւ ոչ թէ ուրիշները:

## ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր ԴԱՍԸ

Մեղքերու քաւութիւն եւ ներում վայելած անձ մը, ուրիշ բան չի կրնար ճառագայթել իր չորս դին, եթէ ոչ միայն ներում եւ ներողամտութիւն: Եթէ կ'ուզէք գիտնալ, որ մէկը մեղքերու ներում ստացած է թէ ոչ, դիտեցէք անոր կեանքը: Եթէ ներող անձ է կը նշանակէ, թէ ներում ստացած մէկն է, իսկ եթէ ներող չէ՝ կը նշանակէ, թէ չէ վայելած Տիտղոս շնորհած ներումին ուրախութիւնը:

# ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

## ԵԹԷ ՄԵՂՔԵՐԷՂ ՍՐԲՈՒԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՍ ԿԱՐՎ՝ ՍԱՂՄՈՍ 25

Տիրոջն է երկիրը՝ իր ամբողջ լիութեամբ, աշխարհը՝ իր բնակիչներով: Որովհետեւ ի՛նք անոր հիմերը դրաւ ծովերուն վրայ, ովկիանոսներուն վրայ հաստատեց զայն: Ո՛վ արժանի է Տիրոջ լեռը ելլելու, ո՛վ կրնայ անոր սուրբ տաճարին մէջ կանգնիլ: Ան՝ որ մաքուր է իր գործերով ու մտածումներով, ան՝ որ ստութեան անձնատուր չէղաւ, եւ նենգութեամբ երդում չըրաւ: Այնպիսի Տիրոջմէ օրհնութիւն պիտի ստանայ, արդարութիւն պիտի գտնէ զինք փրկող Աստուծմէն: Այսպէ՛ս կ'ըլլայ աստուածապաշտը, որ կ'ուզէ քու ներկայութեանդ գալ, ո՛վ դուն՝ Աստուածը մեր հայրերուն: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՛վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտեանութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: - Ո՛վ է այս փառաւոր Թագաւորը: - Տէ՛րն է, հզօր եւ անպարտելի, Տէ՛րը, պատերազմի մէջ անխորտակելի: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՛վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտեանութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: - Ո՛վ է այս փառաւոր Թագաւորը: - Ամենակալ Տէ՛րը, ի՛նքն է փառաւոր Թագաւորը:

**Միասնաբար աղօթենք կարդալով Սաղմոսագիրքը**